ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № ՇՀԱՊՁԲ-9/24-1

ք. Երևան 9 -ը դեկտեմբերի 2016թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «Էսզեթ ֆարմա» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ե. Սարգսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված № 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի № 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքներ /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված № 3/:

2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի № 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/ սույն պայմանագրով նշված հասցեով /ներով/:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **10 օրից** ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են **10 օրից** ավելի,

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայամագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի №№ 1, 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝23,936,450(քսաներեք միլիոն ինը հարյուր երեսունվեցհազարչորս հարյուր հիսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը: Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա, 15 բանկային օրվա ընթացքում՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2016թ. դեկտեմբերի 25-ը:

5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ Պայմանագրի № 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (*Հավելված № 4*) և Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (*Հավելված № 4.1*):

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հինգօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.5 Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքըչիկարողփոխանցվելայլանձի, առանցպարտապանկողմիգրավորհամաձայնության:

9.3 ՊայմանագրիհետկապվածվեճերըենթակաենքննությանՀայաստանիՀանրապետությանդատարաններում:

9.4 ՊայմանագրումփոփոխություններևլրացումներկարողենկատարվելմիայնԿողմերիփոխադարձհամաձայնությամբ՝ համաձայնագիրկնքելումիջոցով, որըկհանդիսանաՊայմանագրիանբաժանելիմասը:

Արգելվում է Պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման: Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ապրանքի ամբողջ ծավալով մատակարարման ժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածի յուրաքանչյուր վեցերորդ ամիսը լրանալը Գնորդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա սահմանված կարգով շրջանակային համաձայնագրերով կազմակերպում է տվյալ ապրանքի ձեռքբերման նոր ընթացակարգ: Եթե այդ ընթացակարգի արդյունքում սահմանված կարգով ձևավորված նվազագույն միավոր գինը որևէ ապրանքի մասով ցածր է Պայմանագրով սահմանված գնից, ապա այդ մասով Գնորդը մեկ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին ներկայացնում է ապրանքը ձևավորված ցածր գնով մատակարարելու պահանջ և Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագրի նախագիծը: Եթե Վաճառողը երկու աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում և Գնորդին ներկայացնում Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագիրը, ապա այդ

մասով Գնորդը ընտրված մասնակցի հետ կնքում է նոր պայմանագիր և դրա ուժի մեջ մտնելու ամսաթվին համապատասխան այդ մասով միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը՝ առանց Վաճառողի նկատմամբ Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման:

9.6 Ապրանքի մատակարարմանժամկետըկարողէերկարածգվելմինչև Պայմանագրով այդժամկետըլրանալը Պայմանագրի կողմիառաջարկությանառկայությանդեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդիմոտչիվերացելգնմանառարկայիօգտագործմանպահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարմանժամկետըկարողէերկարածգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

9.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.8 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Վաճառողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

9.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքովկամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.10Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.11Պայմանագիրը կազմված է 12էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի №№ 1, 2, 3, 4 և 4.1 հավելվածները համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.12 ՊայմանագրիհետկապվածհարաբերություններինկատմամբկիրառվումէՀայաստանիՀանրապետությանհրավունքը:

9.13 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ԶՈՒ ՌԲ վարչությունը:**

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀպաշտպանությաննախարարություն	«Էսզեթֆարմա» ՍՊԸ
ք. Երևան, Բագրևանդի5	ք. Երևան, ՏիգրանՄեծի 63/23
ՀՀՖՆաշխատակազմի	«Կոնվերսբանկ» ՓԲԸ
գործառնականվարչություն	Հ/Հ 1930000521940100
Հ/h 900011144129	ՀՎՀՀ 00433863
ՀՎՀՀ 00867415	Տնօրեն
ՀՀպաշտպանությաննախարարության	
ՆՏԱդեպարտամենտիպետիՊԺԿ	
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	Ե. ՍԱՐԳՍՅԱՆ
	AM 0296526

ՀՀ ՊՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/հ	Անվանում	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ
3	Թքաածծիչ N100	Թքաածծիչ N100
6	Ատամնաբուժական գործիքների հավաքածու	Մետաղի դասակարգում՝ AISI 420, UNI X30 Cr13, բաղադրություն՝ պողպատ, ածխածին 0.15%, մանգան 1%, սիլիցիում 1%, քրոմ 12-14%: Էլաստիկություն՝ 20.39կգ/մմ², կարծրությունն ըստ Ռոքվելի՝ 50-58 HRC, սահմանային կարծրություն 66-77 կգ/մմ²:որը իր մեջ ներառում է ատամնաբուժական նրբունելի, ատամնաբուժական հայելի իր բռնակով, ատամնաբուժական երկկողմանի զոնդ, ատամնաբուժական մածկիչ,շաղափիչ, ատամնաբուժական հարթիչ, ատամնաբուժական սեղմիչ, ատամնաբուժական էնդոդոնտիկ երկկողմանի զոնդ: Գործիքները պարտադիր պետք է ունենան բազմակի ախտահանման հնարավորություն
7	Ատամնաբուժական էլևատորների հավաքածու	Սինդեսմոտոմ լրակազմ, Լր. ներառում է 1 բռնակ 20 ծայրակալ: Մետաղի դասակարգում՝ AISI 420, UNI X30 Cr13, բաղադրություն՝ պողպատ, ածխածին 0.15%, մանգան 1%, սիլիցիում 1%, քրոմ 12-14%: Էլաստիկություն՝ 20.39կգ/մմ², կարծրությունն ըստ Ռոքվելի՝ 50-58 HRC, սահմանային կարծրություն 66-77 կգ/մմ²:Գործիքները պարտադիր պետք է ունենան բազմակի ախտահանման հնարավորություն
9	Կաղապարաբռնիչ	Պարունակում է մատրիցապահիչ ունիվերսալ և 12 հատ մատրիցա: Մետաղի դասակարգում՝ AISI 304, UNI X5 Cr Ni 1810, բաղադրություն՝ չժանգոտվող պողպատ, ածխածին 0.6%, մանգան 2%, սիլիցիում 1%, քրոմ 10-20%, նիկել 8-12%: Էլաստիկություն՝ 19.687կգ/մմ², կարծրությունն ըստ Ռոքվելի՝ 35-45 HRC, սահմանային կարծրություն 70-126 կգ/մմ²:Օգտագործվում է 0,05մմ և 0,035մմ մատրիցաների համար:
12	Ալգինատ	Հիդրոգում 5 ՝ Ալգինատային չափսանյութ իտալական արտադրության, 453gr, ստվարաթղթե վակումային փաթեթավորմամբ, 5 օր ստաբիլությամբ, մրգային համով, մանուշակագույն փոշի, բերանում գտնվելու ժամանակը 45 վայրկյան: Շաղաղման ժամանակը՝ 30 վայրկյան: Ընդհանուր ժամանակ 1 րոպե 50 վրկ.: ISO
14	Ապլիկատոր N50	Մեկ տուփը պարունակում է 50 հատ
16	Բոնդ	Սվիստեք Բոնդ 5 մլ 22ով, էթանոլի հիմքով, 15 տոկոս ծավալով բաղկացած է ոչօրգանական բարիումական լուցիչից 0.4 միկրոն մասնիկների չափով
17	Հեղուկ պլոմբանյութ	Բրիլիանտ ֆլոու 2,3գ Նանոքոմպոզիտային պլոմբանյութը 84 տոկոս քաշով բաղկացած է ոչօրգանական բարիումական լուցիչից 0.02 միկրոն մասնիկների չափով, 2,3գ ծավալով
19	Նատրիհիպոքլորիդ 3% 250ml	Պարկան -Նատրիհիպոքլորիդ 3% 250ml, մուք վարդագույն հեղուկ, բաղադրությունը՝ նատրիհիպոքլորիդ, ապակյա տարայով, եվրոպական արտադրության:
21	Սիլիկոն Elite HD+ super light body fast set	Չափսանյութ՝ Ա-դասի, երկրորդ շերտ100 մլ, 2 քարտրիջ 50 մլ, պոլիվինիլսիլոքսանի հիմքով, գույնը՝ մանուշակագույն, մշակման ընդանուր ժամանակը՝ 1 րոպե 30 վայրկյան, բերանում գտնվելը՝ 2 րոպե 30 վայրկյան, պնդեցման ժամանակը՝ 4 րոպե, պնդություն Shore՝ 45, առաձգական վերականգնում՝ ավել քան 99,5%. չափսերի ստաբիլություն՝ պակաս քան -0,20%
22	Ռետրակցիոն թել SILTRAX Plus N8	Ռետրակցիոն հյուսած բամբակյա, թել 72 ինչ/183 սմ, երկարությամբ, թաթախված ռացեմիկ էպինեֆրինի հիդրոքլորիդով, 0.089մգ/սմ և ցինկի ֆենոսուլֆոնատով 0.157 մգ/սմ
23	Թերմոպլաստիկ չափսանյութ (ատենս)	Impression compound green – կծվացքի որոշման նյութ, փայտիկի տեսքով, 15 հատ տուփի մեջ, 113 գր, աշխատանքային ջերմաստիճանը 50-51C
24	Ժամանակավոր ցեմենտ	Տեմպբոնդ Նե Ժամանակավոր ցեմենտ էվգենոլ չպարունակող, ժամանակավոր շապիկների և կամուրջների ամրացման համար, լրակազմը պարունակում է 50գ բազա և 15գ ակտիվատոր:

25	Լաբորատոր նյութ ժամանակավոր շապիկների, կամուրջների պատրաստման համար	Ծեաք 2000 -Նյութը ակրիլային, փոշի երեք տիպի՝ դեղին, միջին և բաց, յուրաքանչյուրը 30 գրամ, բաղադրությունը՝ 55-60% պոլիմեթիլմեթակրիլատ,30-40% կալցիում կարբոնատ, 1-2% բենզոիլ պերօքսիդ, 1% պիգմենտ արծաթի օքսիդի հիմքով հեղուկ երկու տիպի՝ սովորական և արագ կարծրացման, յուրաքանչյուրը, 30 մլ, բաղադրությունը՝ էթիլ մեթակրիլատ 98 %, N,N-դիմեթիլ P-թոլուիդին 1-2%.
28	Ռաբեր դամի համակարգ	Ռաբեր դամի գործիքների լրակ. Լր. ներառում է՝ ռաբեր դամի դակիչ Hygenic 160մմ, կլամպի աքցան Hygenic 175մմ, ռաբեր դամի գերամուր շրջանակ ախտահանվող , կլամպների պատվանդան՝ իր կլամպաներով 9 հատ: Մետաղի դասակարգում՝ AISI 410, UNI X12 Cr13, բաղադրություն՝ պողպատ, ածխածին 0.15%, մանգան 1%, սիլիցիում 1%, քրոմ 11.5-13.5%: Էլաստիկություն՝ 20.39կգ/մմ², կարծրությունն ըստ Ռոքվելի՝ 45-55 HRC, սահմանային կարծրություն 45-88 կգ/մմ²:Պարունակում է ռաբերդամի թաշկինակ 6x6 152x152 չափի 36 հատ, դակման ֆիքսատոր, ֆլոս 2մ
29	Մետաղական գդալներ հավաքածու	Ծեփակերտման պողպատե գդալների լրակ. ռետենցված եզրերով, անատոմիական, N10: Մետաղի դասակարգում՝ AISI 304, UNI X5 Cr Ni 1810, բաղադրություն՝ պողպատ, ածխածին 0.6%, մանգան 2%, սիլիցիում 1%, քրոմ 10-20%, նիկել 8-12%: Էլաստիկություն՝ 19.687կգ/մմ², կարծրությունն ըստ Ռոքվելի՝ 35-45 HRC, սահմանային կարծրություն 70-126 կգ/մմ²:
36	Կյուրետաժի գդալ երկկողմանի	Կյուրետաժի գդալ երկկողմանի: Մետաղի դասակարգում՝ AISI 410, UNI X12 Cr13, բաղադրություն՝ պողպատ, ածխածին 0.15%, մանգան 1%, սիլիցիում 1%, քրոմ 11.5-13.5%: Էլաստիկություն՝ 20.39կգ/մմ², կարծրությունն ըստ Ռոքվելի՝ 45-55 HRC, սահմանային կարծրություն 45-88 կգ/մմ²: Չափսային տարբերակումով:
39	Ատամնաբուժական ալյումինե տեփուր	Ատամն. ալյումինե տեփուր, ուղղանկյունաձև՝ ունի գունային 4 տարբերակ՝ կանաչ, կապույտ արծաթագույն, ոսկեգույն: Տեփուրը պարտադիր պետք է ունենան բազմակի ախտահանման հնարավորություն:
42	Սկեյլերի ծայրակալիկների հավաքածու	ANTHOS A5 համակարգի համար նախատեսված N4
43	Ձեռքի սկեյլեռների հավաքածու	Գրայսի սկեյլեռների հավաքածու:Գունային տարբերակումով:
44	Septanest with adrenaline 4% 1,7ml 1:100000 N50	Արտիկաինիհիմքով, 4%, տուփիպարանակությունը 50 հատփամփուշտ 1,7 մլ , ադրենալինիպարունակությունը 0,01 մգ, փաթեթավորումը՝տուփով

Ծանոթություն.

1.Արտադրողիմիջազգայինհավաստագրի/ISO,GMP,ECկամայլ/և/կամ/արտադրողպետությանկողմիցպրվածարտադրությանանվտանգությաննորակիվերահսկմանհավաստագրիպարտեն:

2. Արտադրողկազմակերպության (կամարտադրողիպաշտոնականներկայացուցչի)՝կողմիցտրվածապրանքի /ապրանքատեսակներիխմբաքանակի/ համապատասխանության (կամ) որակիհավաստագիրը:

3. Պիտանելիությանժամկետունեցողապրանքներիդեպքում՝ապրանքատեսակներըհանձնմանպահինպետքէունենանառնվազնպիտանելիությանժամկետի 1/2-ը:

ԳՆՈՐԴ
ՀՀպաշտպանությաննախարարություն
ՀՀպաշտպանությաննախարարության
ՆՏԱդեպարտամենտիպետ ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«Էնզեթֆարմա» ՍՊԸ
Տնօրեն

Ե. ՍԱՐԳՍՅԱՆ

Ն/Հ. Դ. [illegible]
Հեռ. Հ[illegible] AK 029 65 26

Հավելված № 2
№ ՇՀԱՊՁԲ-9/24-1 պայմանագրի

ՀՀ ՊՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ 2016Թ.

Հ/հ	Անվանում	Հ/մ	Քանակ	Միավորի գինը	դեկտեմբեր /ոչ ուշ քան 10.12.16թ./	Գումարը դրամ
3	Թքաձծիչ N100	տուփ	350	900	350	315,000
6	Ատամնաբուժական գործիքների հավաքածու	հավաք	124	50,000	124	6,200,000
7	Ատամնաբուժական էլևատորների հավաքածու	հավաք	43	200,000	43	8,600,000
9	Կաղապարաբռնիչ	հատ	139	10,000	139	1,390,000
12	Ալգինատ	տուփ	15	2,170	15	32,550
14	Ապլիկատոր N50	տուփ	50	880	50	44,000
16	Բոնդ	տուփ	2	32,000	2	64,000
17	Հեղուկ պլոմբանյութ	հատ	6	6,800	6	40,800
19	Նատրիհիպոքլորիդ 3% 250ml	հատ	3	8,900	3	26,700
21	Սիլիկոն Elite HD+ super light body fast set	տուփ	8	15,600	8	124,800
22	Ռետրակցիոն թել SILTRAX Plus N8	տուփ	12	4,300	12	51,600
23	Թերմոպլաստիկ չափսանյութ (ստենս)	տուփ	4	9,800	4	39,200
24	Ժամանակավոր ցեմենտ	տուփ	6	14,200	6	85,200
25	Լաբորատոր նյութ ժամանակավոր շապիկների, կամուրջների պատրաստման համար	տուփ	2	26,800	2	53,600
28	Ռաբեր դամի համակարգ	հատ	6	174,000	6	1,044,000
29	Մետաղական գդալներ հավաքածու	տուփ	4	28,000	4	112,000
36	Կյուրետաժի գդալ երկկողմանի	հատ	4	6,500	4	26,000
39	Ատամնաբուժական ալյումինե տեփուր	հատ	140	6,000	140	840,000

42	Սկելերի ծայրակալիկների հավաքածու	հավաք	1	35,000	1	35,000
43	Ձեռքի սկելեռների հավաքածու	հավաք	2	120,000	2	240,000
44	Septanest with adrenaline 4% 1,7ml 1:100000 N50	տուփ	508	9,000	508	4,572,000

ԳՆՈՐԴ
ՀՀպաշտպանությաննախարարություն
ՀՀպաշտպանությաննախարարության
ՆՏԱդեպարտամենտիպետիՊժԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«Էսգերֆարմա» ՍՊԸ
Տնօրեն

Ե. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված № 3
№ ՇՀԱՊՁԲ-9/24-1 պայմանագրի

ՀՀ ՊՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ 2016Թ,

Հ/հ	CPV կոդ	Անվանում	Հ/մ	Քանակ	Միավորի գինը	դեկտեմբեր բայց ոչ ուշ քան 10.12.2016թ	Գումար
3	33141193/19/4/5	Թքածծիչ N100	տուփ	350	900	315,000	315,000
6	33141193/23/4/4	Ատամնաբուժական գործիքների հավաքածու	հավաք	124	50,000	6,200,000	6,200,000
7	33141193/24/4/4	Ատամնաբուժական էլևատորների հավաքածու	հավաք	43	200,000	8,600,000	8,600,000
9	33141193/27/4/2	Կաղապարաբռնիչ	հատ	139	10,000	1,390,000	1,390,000
12	33141194/15/4/5	Ալգինատ	տուփ	15	2,170	32,550	32,550
14	33141193/31/4/5	Ապլիկատոր N50	տուփ	50	880	44,000	44,000
16	33141194/17/4/5	Բոնդ	տուփ	2	32,000	64,000	64,000
17	33141194/18/4/2	Հեղուկ պլոմբանյութ	հատ	6	6,800	40,800	40,800
19	33141194/7/4/2	Նատրիհիպոքլորիդ 3% 250ml	հատ	3	8,900	26,700	26,700
21	33141198/2/4/5	Սիլիկոն Elite HD+ super light body fast set	տուփ	8	15,600	124,800	124,800
22	33141193/32/4/5	Ռետրակցիոն թել SILTRAX Plus N8	տուփ	12	4,300	51,600	51,600
23	33141194/8/4/5	Թերմոպլաստիկ չափանյութ (ստենս)	տուփ	4	9,800	39,200	39,200
24	33141194/9/4/5	Ժամանակավոր ցեմենտ	տուփ	6	14,200	85,200	85,200
25	33141194/10/4/5	Լաբորատոր նյութ ժամանակավոր շապիկների, կամուրջների պատրաստման համար	տուփ	2	26,800	53,600	53,600
28	33141193/35/4/2	Ռաբեր դամի համակարգ	հատ	6	174,000	1,044,000	1,044,000

29	33141193/36/4/5	Մետաղական գդալներ հավաքածու	տուփ	4	28,000	112,000	112,000
36	33141193/42/4/2	Կյուրետաժի գդալ երկկողմանի	հատ	4	6,500	26,000	26,000
39	33141193/45/4/2	Ատամնաբուժական ալյումինե տեփուր	հատ	140	6,000	840,000	840,000
42	33141193/49/4/4	Սկելետի ծայրակալիկների հավաքածու	հավաք	1	35,000	35,000	35,000
43	33141193/50/4/4	Ձեռքի սկելետների հավաքածու	հավաք	2	120,000	240,000	240,000
44	33141193/15/4/5	Septanest with adrenaline 4% 1,7ml 1:100000 N50	տուփ	508	9,000	4,572,000	4,572,000
		ԸՆԴԱՄԵՆԸ				**23,936,450**	**23,936,450**

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով:

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տնօրեն

ՎԱՃԱՌՈՂ
«Էպլեթ Ֆարմա» ՍՊԸ

Ե. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված №4
№ՇՀԱՊՁԲ-9/24-1պայմանագրի

Պայմանագրիկողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելուվայրը _____	գտնվելուվայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ№
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«» « »20թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրիկնքմանամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրիհամարը՝_____
Պատվիրատուն՝իդեմս_____և
Պայմանագրիկողմը՝իդեմս_____,
հիմքընդունելովՊայմանագրիկատարմանվերաբերյալ «____» «_____» 201թ. կազմված՝ գնմանհայտընախագծածներկայացուցչի№եզրակացությունայնմասին, որՊայմանագրովնախատեսված՝ ստորևնշվածմատակարարումներըհամապատասխանումենՊայմանագրովամրագրվածտեխնիկականբնութագրերինևգնմանժամանակացույցին՝ կազմեցինսույնարձանագրությունըհետևյալիմասին.
ՊայմանագրիշրջանակներումՊայմանագրիկողմըմատակարարելէհետևյալապրանքները՝

№	Մատակարարվածապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալմատակարարումներիվերաբերյալբոլորհաշիվ-ապրանքագրերըհանդիսանումենսույնարձանագրությանբաղկացուցիչմասըևկցվումեն:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված № 4.1
№ՇՀԱՊՁԲ-9/24-1պայմանագրի

ԱԿՏ№

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Գնորդ)և
(Գնորդի անունը)
----------ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ------ -ին կնքված№----------
(Վաճառողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը20թ. --------- – -ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

ազգանուն, անուն

ստորագրություն